

ՄԱՅԻՍ

Տարեկան դիմը 10 րուբլ, կես տարեկանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարադարձացիք դիմում են ուղղակի
Դպրատն: Редакция «Маяк»

Խմբագրատունը բաց է առաջօրեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Ցայտարարութիւնները համար: զմարտի 6 են
խորտակնիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Բիկօնաֆիլիդ և Վազգոսան:—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Թիֆլիսայ, Նամակ Թիֆլիսայից:—ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ: Լազարեան ձեռնարանի առիթով:

ԲԻԿՕՆՍՏԱՆԻԿ ԵՒ ՎԱՍԿՍՏՈՆ

Բիկօնաֆիլիդը մեռաւ: Պաշտօնական
կուսակցութիւնը կորցրեց իր արժանաւոր
առաջնորդին: Թէև Վազգոսանը ամենայն
միջոց դորձ էր գնում նրան պետական հաշ-
ւով հանգիստը կրկնով թաղելու, թէև
նրա բնակարանը ամբողջ օրերով շրջապատ-
ված էր լինում բազմաթիւ կառքերով, թէև
ամեն մի անգլիացի աշխատում էր յարգու-
թեան նշաններ ցոյց տալ դէպի նա,—բայց
այդ մի սովորական պատիւ է, որ տալիս են
մեռածներին և ոչ ոք չէ կարող պնդել, որ
հանգուցեալ լորդի յիշատակը պաշտելի կը
մնայ: Նրա բաղձնալիցի, եսական, նեղ և
ճշդօրէն քաղաքականութիւնը թէ ներ-
քին և թէ արտաքին գործերի վերաբերու-
թեամբ միշտ դատապարտված կը լինի պատ-
մութեան էջերում: Որքան անհամակրելի
է Բիկօնաֆիլիդի անունը, նոյնքան համակ-
րական, պայծառ և տոնելի կը լինի Վազգո-
սանի անունը: Իր բոլոր գործունէութեան
ընթացքում քաղաքական ասպարէզի վրա
միշտ արտայայտելով ազատամիտ կուսակ-
ցութեան հայեացքները և համոզմունքնե-
րը, Վազգոսանը օրերումս միջոց ունեցաւ
նորից ցոյց տալու, թէ ինչ ահագին դա-
նազանութիւն կայ պաշտօնական և ա-

զատամիտ քաղաքականութեան մէջ: Մար-
տի 26-ին Վազգոսանը առաջարկեց պար-
լամենտի ներքին պալատի քննութեանը մի-
նոր հողային օրէնք, որի նպատակն է վերջ-
ինչ իրականացում տրամադրող անտեսա-
կան խառնակութիւններէն իրականացնի
մինչև այժմ չունի ոչ մի կտոր հող, ինչ-
պէս սեփականութիւն: Բոլոր հողը պատ-
կանում է մի քանի խոշոր կալուածատէր
լորդերին: Իրականացնի վարձում է (арен-
дует) նրանցից այդ հողը, ալամայից
ստիպված լինելով հնազանդելու բոլոր այն
պայմաններին, որոնք առաջարկում են հո-
ղատէրերը: Բացի անորոշ և երբեմն հրէշա-
ւոր վարձից, որ վճարում է թշուառ գիւ-
ղացին, նա երբեք չէ կարող ազատի հա-
մարել իր վարձի իրաւունքը (право арен-
ды): Հողատէրերի կամայականութիւնը միշտ
ճշունք է նրան: Այս է պատճառը որ մի-
շտ այժմ շարունակվում է լորդ-հողատէրե-
րի և իրականացնի-վարձողների մէջ եղած
փոխմի թշնամութիւնը: Անգլիան դեռ չէ
մոռացել անցեալ տարում կատարված զար-
հուրի «հողային եղանակգործութիւննե-
րը», որոնց շարունակութիւնը կատարվում է
ներկայումս: «Հող տուէք մեզ, առանց հո-
ղի մենք չենք հանգստանալ» —ահա ինչ է
գոռում վերջին թշուառութեան հասած
ողորմելի իրականացնի: Ի՞նչ անել: Հրացանի
գնտալով փակել նրա բերանը, բա՛նդ դնել,
աքսորել, մահ՛՞հ դատապարտել... Այդպէս
կը վճռվէր բանը, եթէ կառավարութեան
զեկը աւանդապաշ պաշտօնողականների
ձեռքում լինէր: Բայց Վազգոսանը, որ սո-
վոր է նայել հասարակական երևոյթիներ

վրա ազատամիտ և լայն-դիմանկան տեսա-
կետից, այդպէս չէր կարող վարվել: Այդ
ժանր հարցի բազմակողմանի ուսումնասի-
րութիւնը հասցրել է նրան այն եզրակա-
ցութեանը, որ անգլիական կառավարու-
թիւնը պէտք է վերջապէս բաւականու-
թիւն տայ իրականացնի իրաւացի և
բնական պահանջներին: Վազգոսանի նոր
օրէնքով իրականացնի կարող է ձեռք բերել
հող, ինչպէս սեփականութիւն: Մի առան-
ձին յանձնաժողով, կառավարութիւնից դրա-
մական օժանդակութիւն ստանալով, պէտք
է հետզհետէ ձեռք բերի լորդերից նրանց
ձախճող հողերը և յարմար պայմաններով
ձախճի իրականացնի գիւղացիների վրա: Այս-
պիսով կը կազմվի իրականացնի հողատէր
գիւղացիների դասակարգը: Ի հարկէ դեռ
բաւական ժամանակ պէտք է սպասել մին-
չև որ իրականացնի գիւղականութիւնը դը-
խովին հողաւոր դառնայ, իսկ առ այժմ
դեռ կը շարունակվին առաջնայ յարաբե-
րութիւնները, այսինքն լորդերը վարձով կը
տան իրանց հողերը: Վազգոսանի օրէնքը,
բացի յիշեալ զխաւոր կէտից, մտցնում է
նոյնպէս նոր կարգ լորդերի և վարձողների
յարաբերութիւնների մէջ: Նա առաջար-
կում է, որ նրանց մէջ պատահող բոլոր
անհամաձայնութիւնները քննվին դատա-
տանով, որ միայն կարող է անհաճարկ
լորդերի կամայականութիւնը:

Այդ գեղեցիկ օրէնքը, եթէ ընդունվի,
մի ահագին փոփոխութիւն կը մտցնի ներ-
կայ հողային յարաբերութիւնների սխառ-
մի մէջ:
Պաշտօնական կուսակցութիւնը, որ
Լ. ճեմարանի Մինչև երբ պիտի շարունակվի այդ
յամառ լուրերը, Աստուծոյ է միայն գիտելի:
աւելորդ չէր լինի նկատել, որ 1872 թ. բարձ-
րագոյն իշխանութիւնից հաստատված Լ. ճեմա-
րանի կանոնադրութեան 126-րդ յօդուածում
չառ պարզ ասած է թէ «Լազարեան ճեմարանի
իրաւունք է տրվում ունենալ իւր յատուկ տպա-
րանը և գրախօսաւորները: Եթէ մտաբերենք,
թէ ինչ անմխիթար դրութեան մէջն է գտնվում
կովկասեան մամուլը, ցնցողական խիստ պա-
հանջների պատճառով, այն ժամանակ աւելի
հասկանալի և զգալի կը լինի ճեմարանի տպա-
րանի կորուստը: Այստեղ շնորհակալ պէտք է
լինել պ. պ. Մսերեանցիներին, որոնք դնելով
այս տպարանի հայկական տառերը, գտնել վեր-
կեցին նրանց իսպառ անհետանալուց: Այժմ
այդ տառերով տպվում է «Փարոս Հայաստանի»
պատկերազարդ հանդէսը:
Բուն իսկ Լ. ճեմարանի էլ, կոմս Տօլստոյի
ուսումնական սխառմի համաձայն կրեց այն ա-
մենայն փոփոխութիւնները, որոնց ենթարկվի-
ցան ուսուցաց միջնակարգ ուսումնարանները: Լ.
ճեմարանը դարձաւ օրինաւոր կառավարական
գիմնազիոն: Գրա դէմ ոչ ոք ոչինչ չունի ասե-
լու և ճշմարիտ պէտք է խոստովանել, որ նրա
մէջ թաղաւորող գեղեցիկ կարգապահութիւնն
ու կանոնները, հմուտ վարժապետների ընտրու-
թիւնը, որոնք միշտ արթնութեամբ են կատա-
րում իրանց վրա ստանձնած պաշտօնը և, վեր-
ջապէս, աշակերտների յառաջադիմութիւնը, ան-
կասկած, մեծ պատիւ է բերում Լ. ճեմարանին
և նա ուսուցաց միւս գիմնազիաներից պակաս չէ
վայելում տեղացի հասարակութեանց յարգանքը:
սակայն մի խորագութիւն մեզ չփոխում է. դա՛
ցառ է ասել, հայոց լեզուի դաստաւութեան
թուլութիւնն է: Մեր մայրենի լեզուն Լազա-

զիւստօրապէս բաղկացած է խոշոր հողա-
տէրերից, ինչ կարծիք կայ որ սաստիկ
թշնամբար կը վերաբերվի դէպի Վազգո-
սանի նոր օրէնքը:
Նօրդօսը, այդ կուսակցութեան առաջ-
նորդը համայնքների պալատում, իր ճառի մէջ
արդէն ծաղրեց նոր օրէնքը: Պաշտօնա-
դականների զգուշիկ նշանաբանն է եղել
միշտ՝ հակառակել ամեն մի վերանորոգու-
թեան, ամեն մի արդար և ազատամիտ
փոփոխութեան: Հարցնում ենք այժմ ըն-
թերցողին, կայ արդեօք զանազանութիւն
պաշտօնական և ազատամիտ կուսակցու-
թիւնների մէջ, թէ այդ անունները դատարկ
ձայներ են: Հարցնում ենք նոյնպէս «Մեղուի»
քաղաքագէտին, այն քաղաքագէտին, որ
անցեալ տարուայ № 89-ի առաջնորդող
յօդուածում յայտնել է աշխարհին հետե-
ւեալը. — «Մտածել, թէ Անգլիայի քաղա-
քականութիւնը փոխվել է նախարարու-
թեան փոխվելու հետ, ինչպէս մի տգէտ
հայ խմբագիր կարծում է... կը նշանակէ
անձանթ լինել քաղաքագիտութեան այդ
ու բնին և իր տգիտութիւնը ծածկելու
համար մոլորեցնել անգէտ ընթերցողներին,
և տղայի պէս հպարտանալ տգէտների աշ-
քում թէ ինքն ազատամիտ է: Այդպիսի
վարձուքը ներել է միայն ստորին դասա-
տանց աշակերտի, որ դեռ չէ անցել նոր
գարերի պատմութիւն և անձանթ է
տօրիների և վիզերի կուսակցութեանց
ծագման պատմութեան: Այսպիսի խմբա-
ղիրները լաւ կանն, որ լուեն այնպիսի
հարցերի մասին, որ իրանց գիտութիւնից
և խելից վեր են...»

րեան ճեմարանում, կարծես, անարգված է. նա
իրօք չէ վայելում այն արտօնութիւնը, որ, հա-
մաձայն գիմնազիական ընդհանուր կանոններին,
յատուկ է նոյն ճեմարանի մէջ աւանդող միւս
առարկաներին. ի նկատի պէտք է ունենալ, որ
1872 թ. Լ. ճեմ. կանոնադրութեան 59-րդ յօդ-
ուածի ա. ծանօթութեան մէջ յիշված է թէ «эти
предметы не даются наравнѣ со всѣми предметами гимна-
зическаго курса въ классное время»:
Մեր խօսքը այստեղ ժամանակի վրա չէ, այլ
լեզուի ուսուցանելու եղանակի և աշակերտների
պատրաստութեան վրա է: Մայիս ամսին, երբ
հարցաքննութիւնը վրա է հասնում և աշակերտը
հայերենից անբաւարար նշան է ստանում, նրան
երկրորդ տարին չեն թողնում մի և նոյն դասա-
տան մէջ, ինչպէս ընդունված է առհասարակ ա-
մենայն կարգի ուսումնարաններում, այլ փո-
խում են հետեւալ դասատուներ: Ասա, ինչպե՞ս
ուշիմ ընթերցող այս օրինակ վարժուէրը չէ
նշանակում արդեօք հալածել բուն իսկ լեզուն
և վիրաւորել նրա դաստաւութեան—ուսուցիչների ինք-
նասիրութիւնը:
Այժմ տեսնենք թէ Լ. ճեմարանի աշակերտ-
ները կարդում են պ. կոստանեանցի Հիւս-
ուածքը, Նեղի՞ն, երբեմն Մովսիսի կաղան-
կատուացու Աղուանից պատմութիւնը և Մ.
Խորենացուն, իւրաքանչիւր դասին կարդացած
հատուածներն, ըստ սովորութեան, վերլուծում
են, գոյական անունները հոլովում են. (պէտք է
նկատել որ հոլովների թիւը տասնից վեցի է
իջել, թէև պատմական տեղ ասել բացառական
զ նախորդի, կամ պարաօական տեղ՝ գործիա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՐՀՐԻԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԼԱԶԱ- ՐԵԱՆ ԶԵՄԱՐԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Գերհռչակ Լազարեանց տոնմի՝ 1815 թ.
Մոսկվայում հիմնած ճեմարանի բարի համբաւը
տարածված է աշխարհիս այն ամենայն կողմե-
րում, ուր միայն պատմական դառն հանգի-
մանքների դրոմմար գողթմած սպորում են ան-
տէր Հայաստանի դաւակնեքը. պանծալի ճեմա-
րանի յիսուն տարուայ ընթացքում մատուցած
ծառայութիւնը մեր հայ և ռուս հասարակու-
թեանց անօրինակ և կարող եմ ասել անգնահա-
տելի է:
Բացի բազմաթիւ ռուս բարձրատիման և պե-
տական անձինքներից, որոնք իրանց ուսուցին և
կրթութիւնը ստացել են Լ. ճեմարանում, դրա
սաներից երբեմն էին՝ նոյնպէս ուսուցաց ներքին
գործոց արդի միջնարդ կոմս Լօրիս-Մելքոնով,
Նեղիպոսի խելիֆի արտաքին գործոց վարչի
միջնարդ Նուբար-փաշան, ստատ-սեկրետար Յով.
Գեղեանով, ճեմարանի արդի հոգաբարձու իշխան
Արամելիք-Լազարեանց, մեր հռչակաւոր գիտ-
նական պ. Մկրտիչ Էմին, Ս. Պետերբուրգի հա-
մալարանի լեզուաբան պրօֆեսոր Բ. Պատկա-
նեանց, զին.որական, քաղաքական և նոր դրա-
կանութեան ասպարիզում գործող մեր ազգա-
յինք և այլն:
ճեմարանի անունը եւրոպացոց ուսումնական
աշխարհին էլ քաջ յայտնի էր. վառն զի նրա

Մենք փոքր ինք խոհեմ կը լինենք «Մե-
ղուի» քաղաքագետից և չենք պահանջի,
որ նա «Լուի» և «Լեքսի» վերջ «Հատուկու-
թիւններ չը տայ, այլ թող կը տանք մեզ
առաջարկել նրան մի համեստ հարց»—ի՞նչ
պատմութեան վրա է նա խօսում։ Նթէ
նա ի նկատի ունի այն պատմութիւնը, որ
ճանօթ է ամեն մէկին—սարսափելի մոլոր-
վում է, այդ պատմութիւնը ցոյց է տալիս,
որ տարիներ և վիզեր միշտ եղել են եր-
կու հակառակ կուսակցութիւններ բոլոր-
վին տարբեր հայեացքներով և տեսլանքա-
ներով։ Նրանց մէջ եղած զանազանութիւնը
ամենապարզ կերպով երևում է ներկայումս։
Նթէ չը վախենայինք ձանձրացնել «Մշակի»
ընթերցողներին, մենք այստեղ կապացու-
ցանք ինքն այդ զանազանութիւնը պատմա-
կան փաստերով։ Այնու ամենայնիւ, եթէ
հարկաւոր լինի այդ—պատրաստ ենք։ Աւելի
հաւանական է, որ «Մեղուի» քաղաքագետը
հիմնովն է մի ուրիշ, դուցէ «Մեղուի» խըմ-
բագրատան մէջ արտադրող պատմութեան
վրա։ Մենք զրա դէմ հակառակելու ոչինչ
չունենք։

Այդ պատմութիւնը արդէն լաւ յայտ-
նի է հայ հասարակութիւնը։ Նթէ նրան
լսես, նա դուցէ տօրիներ և վիզերի ծա-
ղումը դուրս բերի թէհրանից կամ խորա-
սանից։

Մտածաւ, Ս. Կազեանց

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրները յայտնում են որ այն լուրը սուտ
է իբր թէ Կիւսապիտի հայրը խեղդուել է։ Մտա-
կայի սուրբ Տրիֆոնի եկեղեցում չը կայ էլ մի
քահանայ Կիւսապիտի աղագանուով։

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ
նորերումս գտել են Ս. Պետրոսբուրգում երեք
գաղտնի տպարաններ։

Ս. Պետրոսբուրգում լինում են այժմ ժողովր-
դական դատախազութիւններ ամեն տեսակ հար-
ցերի վրա։ «Голосъ» լրագրի խօսքերին նայե-
լով այդ դատախազութիւնները մեծ աշխուժութիւն
ունեն։

Կան զ նախորդի մեծ նորաձեւութիւն չէ. բայց
ինչ և իցէ, յետոյ բայերը, իր կարգին, խոնար-
հում են, առանց մեկնելու, յայտնի բան է, թէ հա-
յոց եղանակներն ու ժամանակները ուրիշ լեզու-
ներում ինչին են համապատասխանում. այսինքն
մեր անցեալ անկատարը նման է արդեօք Ֆրան-
սիացւոց Imparfait-ին, կամ ապաւորի բաղադ-
րաւը Conditionnel է թէ Subjonctif և այլն։
Վերին դատարաններում պատանիները, անկա-
կած, համաձայնութիւն (Синтаксисъ) էլ սովո-
րում են, գաղափար ունեն բացայայտիչ և բա-
ցայայտեալի կամ յատկացուցիչ և յատկացեալի
մասին. միով բանիւ, դուցէ ասի ընթերցողը,
Լազարեան ձեմարանի աշակերտները բոլոր քե-
րականութիւնը կրանում են, ուրեմն, արձակ
կարողում ու հասկանալի են մեր ընտիր հեղի-
նակների երկատիւնութիւնները. երանի թէ այն-
պէս լինէր. բայց դժբաղդաբար այնպէս չէ. պար-
զենք մեր միտքը։

Դեցուք թէ աշակերտները կարողում են, օրի-
նակի համար, Նիլիէի երկրորդ յեղանակը, ուր
պատմութիւն է թէ հայոց եպիսկոպոսներ՝ այն է՝
Յովսէփ, Սահակ, Մեղիտ, Նիկի, Սուրմակ և
այլք՝ Հայաստանի զանազան կողմերից, եւ դիտ-
մամբ չեղանում են երկիրների անունները, Այրա-
րատից, Տարսուցից, Մանազկերտից, Բագրևանդից,
Տալիքից, Տուրուբերանից, Բզնունեաց, Սիւնեաց,
Ռշտունեաց և ուրիշ աշխարհներից—ժողովել են
այն ժամանակի թագաւորանիւտ Արտաշատ քա-
ղաքը, որպէս զի հայոց նախարարների և ժողո-
վրդեան հաւանութեամբ պատասխան գրեն Պար-
սից վարուկ Միհրանեսի յանդուգն հրովարտա-
կին։ Այս հատուածը, ըստ երևոյթի, ոչինչ
գիտականութիւն չէ բովանդակում իր մէջ և լե-
զուի քերականական ձևերին և կանոններին տե-
ղեակ աշակերտը հեշտութեամբ կը թարգմանի

լով այդ դատախազութիւնները մեծ աշխուժութիւն
ունեն։

Նիկիայի Բուրնիշտայնի մահից յետոյ Մոսկ-
վայի երաժշտական դպրոցի (Կոնսերվատորիայի)
դիրեկտոր հրաւիրված է Բալակիրևի։

Լիովայի մէջ ժողովրդի այն մասը, որին ու-
նիտներ են անուանում և որի մասին հաւա-
տացած էին թէ մի քանի տարի առաջ կաթո-
լիկներից անցել էր ուղարկւած եկեղեցին,
նոր Կաթոլիկ երգում տալու ժամանակ իրեն
սկսեց խորովին դիմել դէպի կաթոլիկ եկեղեցի-
ները։ Կաթոլիկ քահանաները չուզեցին երգ-
նեցնել ժողովրդին ասելով որ իրաւունք չունեն
ուղարկուածներին կաթոլիկ եկեղեցում երգ-
նեցնել։ Բայց ամբողջ պնդում էր որ ինքն կա-
թոլիկ կրօնի է պատկանում։ Այն ժամանակ
վարչութիւնը թող տուէր ժողովրդին երգում
տալ հրապարակական տեղերում կաթոլիկ քա-
հանաների ձեռքով։ Երբ երգողներին առաջար-
կեցին ստորագրութիւն տալ իրանց երգման մա-
սին, նրանք հրաժարեցին ձեռք քաշել, ասելով
թէ թղթից չտա են վախենում այն օրից երբ
առանց իմանալու թէ ինչ են ստորագրում, ըս-
տորագրեցին կաթոլիկ եկեղեցուց դէպի ուղա-
ղւած եկեղեցի անցնելու։ «Порядокъ» առեւայ-
նում է որ Լիովայի դիւղացիները վերջին ժա-
մանակները այնքան վախեցած էին թղթից
և ստորագրութիւնից, որ մինչ անգամ հրաժարու-
մէն փափայ իրանց անունով եկած փողերի ըս-
տանալուց, միայն թէ ազատ լինեն թղթի վրա
ձեռք քաշելու պարտաւորութիւնից։

Մեզ հաղորդում են որ Հաւաքարի էջմիած-
նից ցոյց սուրբ Գեորգ եկեղեցու դիմաց գտնվում
է մի փոքրիկ, խոնաւ շինութիւն, պահեստի
պէս, որտեղ ամած են մի քանի տախտակներ։
Այդ տախտակների վրա նստած են մօտ 30 մա-
տաղաւառ երեխաներ 7—10 տարեկան։ Այդ ո-
ղորմելի բուռը դպրոց է ներկայացնում, ուսու-
ցիչը մի սիրացու է, որ իր քահանայի հետ մի-
տեղեանք կամ թաղմանը մանդալով, անխնայ
թողնում է խեղճ երեխաներին։ Մանուկները
ամբողջ օր խաղում են փողոցում, որովհետեւ
ուսումնարանը բակ չունի։ Իսկ այս մի քանի
օր է շինութեան տէրը փակել է ուսումնարանը,
բնակարանի ամսական վարձ էլ ստանալու
պատճառով։

Յօգուտ որբանոցի, որ հիմնվում է Թիֆլիսում
հանդուցեալ Կայսր Ալեքսանդր II-ի անունով,
«Մշակի» խմբագրութեան մէջ ստացվեցան հե-
տեւեալ նուիրատուութիւնները։ Անտոն և Սօֆիա
Կորգանովներ 100 ռ., Ալեքսանդր Նիկիտիչ Թա-
յիբով 50 ռ., Գրիգոր և Արդէսա Արծրունի
50 ռ., «Մշակի» խմբագրութեան անդամ-
ներ 12 ռ., Ալեքսանդր Եղիշով 10 ռ., Վ.
Դաւանդարեան 10 ռ., Ս. Տեր-Նիկողոսեան 10
ռ., Յակոբ Բաբանասով 10 ռ., Համադասով Ա.
բովանդ 3 ռ., Եւգոր Գալիցով 15 ռ., Ս. Պի-
լովարով 3 ռ., Ստեփան Բօրիսով 10 ռուբլ.
Ընդամենը առ այժմ 253 ռուբլ.։ Ստորագրու-
թիւնը շարունակվում է։

այս կտորը թէ աշխարհաբար և թէ ուսուրէն.
բայց եթէ, յանկարծ, դուք հարցնէք աշակերտից
թէ՞ վերոյիշեալ պատմական իրողութիւնը ձե-
ղարւմ և ինչ ժամանակ տեղի ունեցաւ Հայաս-
տանում, գաղափար ունի արդեօք նա այն ժա-
մանակվայ Հայաստանի քաղաքական պարագա-
յից մասին, տեսել է Հայաստանի քարտէզի ե-
րևոյ, ծանօթ է արդեօք երկրի աշխարհագրական
դիրքի և բաժանմունքների հետ. ինչ բաներ են
Այրարատ, Տարսու, Մանազկերտ, Բագրևանդ,
Բզնունիք, Տալիք, Բասեն, Տուրուբերան, Սիւնիք,
Ռշտունիք և միւս անունները. նահանգներ են
թէ գաւառներ, քաղաքներ թէ գիւղեր. որտեղ
էր Արտաշատ քաղաքը, նորա պատմական ծա-
ղումը. ինչ նշանակութիւն ունի ընդհանուր քե-
րականութեան համար Վարդանանց պատե-
րագիրը. աշակերտը հասկանալով է արդեօք այն
պատմական ճգնաժամի արդաւիքը. նա յիշում է
որ 451 թուականին, մինչդեռ Հռոմայեցւոց
Ալեքիս զօրավարը իր բոլոր սպաներ էր լարում
կատալաոնեան դաշտերում պաշտպանելու Նեո-
պայի քրիստոնէութիւնը Հռոմաց Ատտիլա թա-
գաւորից, նոյն իսկ միջոցին, Արտաշ գաւառի,
Աւարայր դաշտում քաջ Վարդան էր արձա-
ցել հայր Սասանեաց դէմ և իր կարմիր արեան
գնոյն էր փրկում Քրիստոսի խաչը Ասիայում.
վերջապէս ո՞վ է ինքն Նիլիէ, խորհնային. ու-
րիշ ինչ հեղինակների մէջ ունենք Վորդ գա-
րում. այս դարձեալ նշանակութիւնը հայոց դա-
կանութեան համար. որ հին ազգի և լեզուի աղ-
ղեցութեան ներքոյ զարգացաւ մեր զրակաւոր-
ութիւնը. ինչու վերջին հարուստ է լոկ պատ-
մական և աստուածաբանական երկասիրութիւն-
ներով, այն ինչ բանաստեղծութիւնը, փիլիսո-
փայութիւնը, բնական և զանազան գիտութիւն-
ներ չը կարողացան խոր արմատանալ հին Հա-

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԻՔԻԱ

Լրագիրները հաղորդում են հետեւեալ
տեղեկութիւնները Ալբանիայի մէջ ծագած
վերջին ապստամբութեան մասին։ Ալբա-
նիայի մէջ նորերումս ծագած ապստամբու-
թիւնը, ինչպէս երևում է, այժմ բաւական
վտանգաւոր է Բ. Գրան համար։ Մինչև
այժմ ալբանցիները ան կ ա ղ ա ղ թ իւ ռ
են Բ. Գրան զօրծում և ա պ ս տ ա մ բ լ իւ մ
էին Բ. Գրան համար յարմար ժամանակ-
ներում, ամեն անգամ, երբ թիւրքաց կա-
ռավարութեանը հարկաւոր էր պատճառ
բերել իր անգորութիւնը իրան ուղղված
պահանջները չը կատարելու համար։ Նթէ
այժմեան ապստամբութիւնը այն սահմա-
նագծի մօտ կատարվել, որտեղ Բ. Գրան
զինուորներ պետք է անէ Զուլաստանին,
ամենքը կը մտածէին, որ այդ ապստա-
մութիւնը և Բ. Գրան պատերազմական
թիւն են թիւրքաց զօրքերը յիշեալ սահ-
մանագծի մօտ կենտրոնացնելու համար։
Բայց ապստամբութիւնը սկսվել է Բօնիայի
և Չերնօզորիայի սահմանների մօտ և Գեր-
վիշ-փաշայի զօրքերը, կենտրոնանալով ապս-
տամբութեան տեղերի մօտ, հեռանում են
յուշական սահմաններից։ Այդ մի ապա-
ցոյց է, որ ապստամբութիւնը ճշմարիտ է
և ուղղված է Բ. Գրան դէմ։

Ապստամբութեան իսկական նպատակը
յայտնի չէ։ Կարելի է ենթադրել, որ ապս-
տամբները ձգտում են ալբանական հարկա-
տու իշխանութիւն ստեղծել։ Նթէ ապս-
տամբները ցանկանային այնպիսի մի ինքնա-
վարութիւն ստանալ, որ զոյրութիւն ունի
Արեւելեան—Ռումելիայի մէջ, այն ժամանակ
նրանց հարկաւոր չէր լինի դէնքի ոյժով
ձեռք բերել այն, ինչ որ Բ. Գրանը Բեր-
լինի դաշնագրի համաձայն պարտաւորվել է
տալ նրանց կամաւորապէս։ Այս դէպքում
ալբանցիների համար աւելի ձեռնտու կը
լինէր՝ սպասել մինչև յոյն-թիւրքական վե-
ճի վերջնալը և ապա խնդրել մեծ պե-
տութիւններից, որ Ալբանիայի վերանորո-
գութիւնների խնդրի հետ միասին ընկնէր։
Ալբանցիների զինաւորված ապստամբու-
թիւնը կարելի է նրանով մեկնել, որ նրանք
ցանկանում են ստանալ աւելի, քան թէ
կարող էին ձեռք բերել խաղաղ ձանապար-
հով, Բերլինի դաշնագրի համաձայն Այս-
պէս թէ այնպէս Գերվիշ-փաշա պետք է

յատանում, թէ և առանձին փորձեր եղել էին
Այն և դրաց նման բաղամթիւ հարցերին, դուք
ոչինչ պատասխան չէք կարող ստանալ Լ. ձե-
մարանի աշակերտներից. նոյնա տղիտութիւնը
այստեղ կատարեալ է։ Կարծում ենք թէ մենք
ճշմարտութեան դէմ չառ չէինք մեղանայի. ինչ
հրապարակելու պիտի լինէր թէ հուշակաւոր Լա-
զարեան ձեմարանի արդի աշակերտները ամե-
նատարական գաղափար անգամ չունեն ոչ հա-
յոց պատմութեան, ոչ գրականութեան և ոչ էլ
աշխարհագրութեան մասին. (խօսքս միայն գիւմ-
նաղիական դաստիարակ աշակերտների մասին
է)։ Նոքա երբ կարողում են խորհնացու պատ-
մութիւնը և այնտեղից տեղեկանում են թէ՞ ի-
նչու Հայաստան անունով մի երկիր է եղել,
որին տրուել էին հայոց իշխանների և թագաւոր-
ների, այդ երկիրը իր թագաւորներով հանդերձ
նոյնա, աշակերտների աչքին երևում են իբրեւ մի
առանցիկական հեփտորե արքայի և հեփտե
գնում ենք, ինչ խորհուրդ ունի այդպէս չեղու-
կի և հարեանցի կարող մի հեղինակ, առանց
մեկնելու նորա միջի պատմած հանգամանքների
և իրերի տեղը, ժամանակը և այլն. կարողաւիս
փոքր ինչ կանգ առնել, հեղինակի մոլթ տեղե-
րը աշակերտների առաջ լուսաւորել պատմական,
գրականական և աշխարհագրական տեղեկութիւն-
ներով ձեմարանի գիմնաղիական դաստիարակ չէ
ընդունված։ Իսկ եթէ ուսուցիչ մտքում երբեմն
ծաղիկ ևս այսպիսի գեղեցիկ ցանկութիւն, նա
անգոր է իրազօրեւում այն, վասն զի...ինչ, ժ ա-
մանակ չէ ներուր։ Ինչպէս թէ ժամանակը.
ուրեմն, չարաթական քանի դաս է նշանակված
հայոց լեզուից իւրաքանչիւր դաստիարակ համար,
դուցէ հարցի դարմացած ընթերցողը. ընդամենը
երեք դաս. միայն այն. ապա ուր մնացին

նշանաւոր պատերազմական զօրծողութիւն-
ներ կատարէ այնպիսի մի ժամանակ, երբ
պետք է վճռվի յոյն-թիւրքական սահմա-
նական վեճը։

Շատ կարելի է, որ այդ անցքը առիթ
տայ յունական կառավարութեանը մերժել
պետութիւնների վերջին պահանջները և
պնդել, որ Բերլինի կոնֆերանսի վճիռ-
ները նոյնութեամբ իրագործվին։ Ալբանցից
ստացված լուրերից երևում է, որ այդ են-
թադրութիւնը անհիմն չէ։ Պետութիւն-
ների դեպքանների միաձայն երկրորդ դու-
թիւնը բաւաքի պատասխանելով, Կուսմու-
դուրոս բաւական խ ս տ ու թ ե տ մ ր նկա-
տել է, որ պետութիւնների ներկայացու-
ցիչները անուշադիր են թողել նրա շրջա-
բերականի այն մասը, որտեղ ուշադրութիւն
էր դարձնում Բ. Գրան իշխանութեան տակ
մնացող յոյն աղագանակութեան վիճակի
վրա։ Կարող է պատահել, որ այդ հանգա-
մանքը առիթ էր տայ յունական կառավա-
րութեանը իրական պատասխան չը տալ
դեպքանների դրութեանը և այդպիսով բա-
նակցութիւնները կարող են նորից երկարել
և մինչև անգամ բոլորովին ընդհատվել։

Թիւրքաց կառավարութիւնը բաւական
կը դժուարանայ, եթէ նա ստիպված լինի
ճնշել ալբանական ապստամբութիւնը և
մի և նոյն ժամանակ պատերազմել Զուլաս-
տանի հետ։ Այդ հանգամանքը յայտնի է
յունական կառավարութեանը, որ երեւի
կաշխատի նրանից օգուտ քաղել։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՔԻԱՅԻՑ

Վան, մարտի 21

Նթէ մինչև անգամ երկինքն մի ձայն գոչէ
յերկիր թէ թիւրքեան ինքնիրեն թողուելով ար-
դարութիւն և հաւատարմութիւն պիտի ձանշայ և
գործադրէ, դարձեալ մի հաւատարմ. Գաղաքակր-
թութիւնը, լուսաւորութիւն և յառաջդիմութիւ-
նը թուրքիոյ աչքին այն են, ինչ որ բուրգա-
յականութիւնը քրիստոնեայ եպիսկոպոսին, և
Աստուծոյ քահանայութիւնը մանկավարժին, և
ձերին (Շէյխ-Իւլ-Խալմին)։ Ինչպէս որ անհայտ
են դաւանութեան մէջ պահանջներ և կարգի-
նալը, սօֆ թ ա յ ք (խալմի քահանայք) և բա-
բունիք (հրեյց վարդապետք), նոյնպէս անհամա-
ձայն է թիւրքիոյ քաղաքական կազմութիւնը
ճշմարիտ քաղաքակրթութեան և մարդկային յա-
ռաջդիմութեան ամենին նուիրական և ամենէն
արդաւան սկզբանց և տարրական գաղափարաց
հետ։ Ի դուր է յուսալ թէ թիւրքեա պիտի բա-
րեկարգի, թէ հպատակաց վրա արդարութիւն

հայոց դրականութիւնը, պատմութիւնը և աշ-
խարհագրութիւնը, առանց որոնց ոչ մի ազգ չէ
կարող հասնել ազգային ինքնաձանադութեան
գաղափարին. հնարաւոր է միթէ մի լեզուի ու-
սումնասիրութիւնը առանց նրա դրականու-
թեան, Պատասխանում ենք. ինչ որ անհարկին
է Ներսիսեան, Գեորգեան և հայոց միւս ու-
սումնասիրներում, միանգամայն հնարաւոր է
Լ. ձեմարանի համար. վերացական խօսքերով—
զա նշանակում է, որ Լ. ձեմարանում, որի ա-
նունը հայերը կէս դար փառաբանութեամբ
էին արտասանում, հայոց լեզու չը կայ, այլ
մնացել է միայն նրա չոր ու ցամաք կմակը։
Գրան է մեզ այսպիսի լեզուով լսուել Լ. ձե-
մարանի վերաբերմութեամբ, բայց ևս առաւել
դաւան է քօղարկել ճշմարտութիւնը։

Ճեմարանի վերջին կանոնադրութեան հաստա-
տութիւնից զինք անցաւ արդէն ինն տարի. մի-
թէ այդքան ժամանակամիջոցում չէր կարելի
մտցնել յիշեալ առարկաների դասաւորութիւնը
գիմնաղիական նախագծի մէջ և այսպէս ընդ
միշտ վերացնել այդ վիթխարի թիւրքութիւնը, որ
լուրդ նսեմացնում է Լ. ձեմարանի փառք ու
պատիւը. հայ հասարակութեան առաջ։ Նթէ
հայոց պատմութեան և աշխարհագրութեան դա-
սաւորութիւնը, ձեմարանից անխախ պատճառնե-
րով, արգելքներին հանդիպի, միանգամայն աւե-
րորդ է նոյն վիճակին ենթարկել գրականու-
թիւնը, երբ դրա իրաւունքը որոշված է վերո-
յիշեալ կանոնադրութեան 59-րդ յօդուածում,
որ կարողում ենք հետեւեալը։ Учебный курсъ
гимназическихъ классовъ Лазаревского Инсти-
тута составляютъ слѣдующіе предметы: 1) За-
конъ Божій, а) Православнаго вѣроисповѣда-
нія 6) Армяно-Григоріанскаго вѣроисповѣда-
нія. 2. Русскій языкъ и Словесность.

պիտի իշխէ, և թէ հաւասար իրաւանց տէր պիտի ճանչէ զմահմնականն և քրիստոնեայն: Նոքա որ այդ հաւատն ունին, հաւատոց ամենակոյր տեսակին մէջ են, սխալմանց կեդրոնն յնկած են և անուղղակի պատճառ են այնքան թշուառ ժողովրդեան կորստեան որ թիւրքիոյ ներքին հեծելու թշուառութիւնն ունին: Թիւրքիա յոտից մինչև զլուսն ապականուած է այն ամեն զազկոյ մուլութիւններով և անտերով, որք մարդկային սեռի թուումն անտից կը կազմեն. չիք մի չարութիւն, չիք մի վատութիւն, ոչ մի անդգամութիւն, ուստի զեքը ըլլայ այս հրէշ տէրութիւնը. ամբաստանելու համար չէ որ կրնանք, այլ իւր իսկական պատկերն է զոր կը նկարագրենք, պատմութիւնը անխառ և անաչառ վկայ է մեր այս ըսածներուն, կամ աւելի չիտակն աւել մեք անցնալ և ժամանակակից պատմութիւնէն կը թելադրենք այսպէս ներկայացնել զթիւրքիա: Ո՞ր աշխարհ, կամ ճիշդ քաղաք գրաւեց Օսմանայ վայրագ սերունդը և դայն չաւրեց, չը նսեմացուց փոխանակ շէնքերու և կենդանացնելու: Ամբողջ օսմանցուց պատմութեան մէջ կը տեսնէք զուր մի քաղաք որ օսմանցիք չինած ըլլան, մի երկիր՝ որ նոքա ծաղկեցուցեր են, մի ազգ՝ որ երջանիկ դարձած ըլլայ նրանց ներքին և մի արուեստական, ուսումնական, գիտական և այլն յառաջդիմութիւն, որ նոցա քաջաբերութեամբ ծնունդ առած ըլլայ: Չանձնոյթ չըլլայ ընթերցողաց որ յիշեմք թէ արդեօք Արեւելեան կայսերութեան գաւառներ և այն ընդարձակ աշխարհներ որք օսմանցուց ձեռքն անցած են, առջ ևս ելլալ աղէկ վիճակ ունէին, թէ օսմանեան տիրապետութիւնէն յետոյ: Կ. Պօլս, Ալեքսանդրիա, Զմիւռնիա, Գամպուս, Հալէպ, Ալեքսանդրիա, Աթէնք, Թեսաղոնիկէ, և այլն և այլն և այլն քաղաքներն ու թրակիա, Եգիպտոս, Ասորիք, Փիւնիկի, Միջագետք, Գալիլիա, Հայաստան, Երբի, Վրաստան և այլն աշխարհները օսմանցուց տիրապետութիւնէն առաջ թէ վերջ աւելի ծաղկեալ վիճակ ունէին: Գարձալ այն երկիրներն, որք հետզհետէ օսմանցուց ձեռքէն ելան այժմ աւելի զարգացած են, թէ քանի որ նոցա ներքին էին: Բոլոր այս հարցմանց պատասխաններն այնչափ ծանօթ են, որ կրկնելու անգամ հարկ չը կայ: Արդ տէրութիւն մը որ բռնութեան և մոլեռանդութեան ուժով բարձրացեր և այժմ բարեկարգապէս խոնարհեր է, մեղք չէ թողուլ որ իւր աւերակաց ներքին թաղէ այն ամեն ազգեր, յորոց մաս, մեծացաւ, և նոցա ծուծն ազատելով կարկամեցաւ: Այս, պիտի ինչայ թիւրքիա, զի քաղաքական, ընկերական, ազգայնական, մասնաւոր, ընդհանուր կրօնական, ըն-

տանեկան և այլն այնպիսի ապականութեանց մէջ խորատուեալ է, որք անշուշտ վախճան պիտի բերեն այնմ: Սուլթանէն սկսեալ մինչև յետին պաշտօնեայն թշնամի են երկրին յառաջդիմութեան, ոմանք ուղղակի, այլք անուղղակի: Նենգութիւն, խաբէութիւն, կեղծիք, ահա Օսմանեան տէրութեան բարոյական յենակէտներ: Շահամուլութիւն, քսութիւն, զրկանք, ահա նորա պաշտօնէից նպատակ: Կաշառք, չնորակ, սիրոյ վատ հրապոյր, ահա ամեն գործոց չարժանիք: Միթէ կրնայ տուլալ տէրութիւն մը որ այս աստիճանի վատթարացեր է, անշուշտ ոչ: Բայց ինչ օգուտ որ իւր անկումն հպատակաց կորուստն ալ առաջ պիտի բերէ, եթէ իմաստուն ջանքեր որք պէտք են նաև զօրաւոր լինել, չը փութան ապահովել միջոցներ ձեռք առնուլ կանխաւ: Ուսկից են թիւրքիոյ ժողովրդեան ներկայ բոլոր թշուառութիւնները, աղքատութիւն, աղիտութիւն, արուեստից յետադէմ վիճակը, բնակչաց անհամաձայնութիւն և դորա հետեանք հարստահարութեան երեսէն կը ծագին: Աշխարհի ամենալաւ երկիրներու կարգէն են թիւրքիոյ երկրներ, բայց բնակչաց խեղճութիւնը տեսնելով կիսացուի որ այդ բարերէր երկիրները լաւ չեն արտադրեր. պատճառ դարձեալ կառավարութիւնն է: Զի խաւով տարրը սպառել միայն զիտէ, իսկ ոչ—խաւով ժողովուրդը քաղաքակրթ թելիքներէն ունեցած դիւրութիւններէն զուրկ է, որով չը կրնար զարգանալ և երկրին սպառման բաւելով յաւելում գոյացունել, զի ապահովութիւն չը կայ երկիր գործելու, արուեստներ մշակելու, երկաթուղի, օրինաւոր հեռագիր, կանխաւոր թղթատար, բարեկարգար ճանապարհ, անհրաժեշտ եղած տեղեր կամուրջ, օթեան և այլն ինչ որ հարկաւոր են երկրի մը զարգացման պակաս են բոլորովին: Աւելցուր ասոնց վրա պետութեան անանկութիւնն, որով միլիոնաւոր անձինք փախցան և կը փախան հեռագիտէ. թոյլատրեալ հարստահարութիւնը, որ կը ցամքեցունէ ամեն արտադրիչ աղբիւրներ, և այն չար ու նենգաւոր դիտումը զոր ունի կառավարութիւնը ոչ—խաւով տարրերն չբացունելու, ահա ամեն բան կատարեալ կը դառնայ և նոյն ինքն կառավարութիւնն ամեն կարեաց աղբիւր և պատճառ ըլլալն ինքնին կապալցուցուի: Ամբողջ թիւրքիոյ համար միայն 150,000 ոսկի նշանակեալ է պիւնէին մէջ հասարակայն կրթութեան գործին, այն ալ անուանական: Բոլոր գաւառական քաղաքաց մէջ չը կայ կառավարութեան կողմանէ բացուած հասարակաց վարժարան մը, ուր ամեն կարգի հպատակաց տղայք աշակերտել կարենան, այլ

քանի մը դպրոց կայ, որք խաւով տղոց յատկացած են միայն, թէպէտ և ծախքն արժենի զանազանց երբեք երկրին վրայ գործածման համար դուրս մը յատկանալու, Կ. Պօլս կերթան, այն համայնակոյ կեդրոնը, որ սպառելով կը սպառէ 30 միլիոն ժողովրդեան մը կեանքը ու չը կըլտանաւ: Քաղաքային և գիտութեան պաշտօնեայք զուրկ տարրական կրթութենէ և սրտով ու մտքով կոյր մարդիկ են, չարագործներ, մարդասիրտներ շատ անգամ կաշառք կերցունելով կաշառք և այլն կը լինին: Թիւրքիա ստուեր է ևւրջական կազմակերպութեան, իրականութիւն չունին օրէնք ու կանոնք, տէրութիւնը չունի կողմնացոյց. պաշտօնեայք չունին ուղեցոյց. գուհիկ մտքեր ինչ որ կը ծնին, այն են օրէնք: Ոչ մի տէրութիւն այս աստիճան վատթար կացութիւն չէ կրցեր չարութեան թէն այս կը չարունակէ ևւրջական հակընդդէմ շահոց մըման չնորհի: Հարկաւոր տարրեր կան որ մարդ չը յիշեր թէ թիւրքիոյ գաւառական քաղաքաց մէջ ոճրագործ մարդասպան մը կ'պատիժ իւր գործոց և յորինակ այլոց զլտատուած ըլլայ. նոյնպէս ոչ մի չարագործ օրինաց տրամադրութեան համար պատիժ կրած ունի: Պատճառը պէտք է փնտել այն դատաւարաւոր յարաբերութեան մէջ, զոր ունին պաշտօնեայք այդ չարագործաց հետ և այն տեսակէտին մէջ որով պաշտօնեայք մարդ չեն համարեր զոչ-մահ մեղսականս, հետեալպէս նոցա վնաս տուող մահ մեղսականաց վրա պատիժ դնել իրենց խղճին հակառակ կը համարեն: Մահմտականք գրեթէ կրօնական զգացմամբ բռնուած են թէ աշխարհի տիրապետելու համար ստեղծուած են, ուստի նուաճելոց վրայ ամեն բռնութիւն ներել կը համարեն: Իրենց այս գաղափարն կը վերնայ միայն այն ատեն, երբ իրենք վերնան աշխարհէ, զի զայն ունեցան, երբ ծնան:

Երկաթայնիւղ մեր խօսքեր կը վերջացնենք, որք այսպէս կամիւրութիւն, 1. Թիւրքիա երբեք ինքնիշխան չը բարեկարգիր. 2. Թիւրքիա քաղաքակրթութեան և յառաջդիմութեան թշնամի է, կաւերէ քան կը շինէ. կը քանդէ քան կը նորոգէ: 3. Թիւրքիոյ կառավարութիւն ինքն է պատճառ իւր ժողովրդեան բոլոր թշուառութեանց. 4. Թիւրքիա մասնաւոր դիտում ունի փաճցունել զոչ-խաւով տարրեր. 5. Թիւրքիա պիտի կործանի իւր ապականութեան համար, բայց կըվախցուի որ նորա անկման ներքին թաղուին միան բոլոր հպատակներն, եթէ մասնաւոր ջանք չըլլայ ազատել դնոսա:

Մ. Ն.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 ապրիլի: Այսօր պարսկական արտաքոյ կարգի զեւպանը իր սվիտայով ժամի երեքին կէսօրից յետոյ Պետրօպոլիօսի մայր-եկեղեցումն էր: Նկեղեցի մտնելու ժամանակ կոշիկները հանեց, ոտարորիկ մօտեցաւ ի Տէր Հանգուցեալ Թագաւորի գերեզմանին, մի քանի րոպէս աղօթում էր և այնուհետև զրեց գերեզմանի վրա կենդանի ծաղիկներէ գեղեցիկ պսակ, որի վրա պարսկերէն գրված էր. Կայսր Ալէքսանդր II-ին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 ապրիլի: „Правит. Вѣстн.“ լրագրի մէջ տպագծ է բարձրագոյն Հրաման. Փինանսական մինիստրութեան ենթարկված ուսումնարանական հիմնարկութիւնները յանձնել ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը: Ապրիլի 17-ին գիշերը փոթորիկ ժամանակ Կրասնոսարսկ քաղաքի ամենալաւ կէսը այրվեցաւ: Կառավարական և ուսումնարանական հիմնարկութիւնները ոչնչացրած են հրդեհից:

Կ. ՊՈԼԻՍ, 20 ապրիլի: Սուլթանի իրադէտով թոյլ է տրվում Բ. Կրանը ընդունել պետութիւնների առաջարկած յոյն-թիւրքական սահմանական հարցի վճիռը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 ապրիլի: Թագաւորը Կրասնոսարսկի հրդեհից փնտաւածներին շնորհեց 10,000 ռուբլ:

ՄՍՍՍՎԱ, 21 ապրիլի: Գեներալ-նահանգապետի մի նոր պարտադիր վճիռ կայացաւ, որ բովանդակում է կանոններ գոնապաններին և զինեղապահներին համար: Սրանց հրամայված է հսկել, որ ոչ մի տեղ ոչ ոք աֆիշաներ կամ այլ թղթեր չը կացնէ առանց թաղապետի թոյլտուութեան և առհասարակ օգնել պոլիցային:

ԳՈՒԲԼԻՆ, 21 ապրիլի: Երէկ Կիլլոն կալանաւորվեցաւ Պօրտպիլիսի մէջ և երեկոյեան կը բերվի Կուբլին պահապանների հսկողութեան տակ:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

3. Армянский языкъ и Словесность և այլն, Ռուսաց գրականութիւնը ուսուցանում են, իսկ հայոցը ոչ: Գրքեր. 61-րդ յօդուածում յիշած է՝ Преподаніе Закона Божія Армяно-Григоріанскаго вѣроисповѣданія и Армянскаго языка распредѣляется по классамъ по опредѣленію Педагогическаго Совѣта (Լազարեւսկոյ Ինստիտուտի): Արդ ում պարտականութիւնն է հրահրել ձեւարանի խորհրդի ուղարկութիւնը հայոց լեզուի անմիջապէս վիճակի վրա. այս հարցին թող պատասխանեն նրանք, որոնք իրանց պաշտօնով ու բարձր դրութեամբ հայկական տարրի ներկայացուցիչ են ձեւանում: 1. ձեւարանի մէջ. դա նրանց բարոյական պարտքն է թէ իրանց յատուկ խղճին և թէ հայ հասարակութեան դատաստանի առաջ: Այսպիսի ծանրակշիւ գործերում պարտապանութիւնը անհերքելի է:

Մենք վերը յիշեցինք թէ՛ իւրաքանչիւր դատարան համար հայոց լեզուից երեք դաս է միայն նշանակված չարաթիւ. ինքն ըստ ինքեան պարզ է, որ այդչափ սուղ լեզուից մի զգալի օգուտ սպասել անհնարին է, և դա է պատճառը, որ 1. ձեւարանի ուսումնարանը աշակերտները գիտարանում են փոքր ի շատէ կանոնաւոր կերպով թելադրութիւն գրելու: Ընթերցողը մեզ գուցէ նկատի թէ բաւականա՞յալ լուր վարժապետի տուած դասերով չէ կարելի և աշակերտը իր զարգացման համար պէտք է գրքեր կարդայ, աշխատի հարստացնել իր աշխարհայեալ գիւթութիւններով, ընդլայնել իր աշխարհայեալ քրքը և այլն. համաձայն եմ. բայց զրա համար հարկաւոր են գրքեր: Միթէ 1. ձեւարանը մատենադարան չունի. ինչպէս չունենայ-ահա տեսէք, 1872 թ. 4. կ. 67-դ յօդուածը: Լազարեւսկի Ինստիտուտի Իմէթե Բիբլիոթեկա: а) сос-

тоящую изъ книгъ, могущихъ способствовать обогащенію учителей познаніями. в). состоящую изъ книгъ, предназначенныхъ для употребленія учащимися և այլն... Բացի դրանից դատական ձեւարանների գրատունը առանձին է, ինչպէս երեւում է 68-դ յօդուածից, ուր ի միջի այլոց յիշած է հետեւալը. Прочія же учебныя пособія состоятъ, по принадлежности ихъ къ тому или другому предмету, въ вѣдѣніи преподавателей сихъ предметовъ: Խանութիւն. (68-դ յօդ.) Забѣдываніе ученическою библіотекой поручается Педагогическимъ совѣтомъ, инспектору, надзирателю или воспитателю: Ինչպէս տեսնում է ընթերցողը ներածած յօդուածներից, ձեւարանի կառավարիչները գովելի արթնութեամբ հողացել են աշակերտների ընթերցանութեան և զարգացման պիտոյքների մասին, և արդարեւ աշակերտների մատենադարանը շատ հարուստ է ուսուցչական բոլոր երեւելի հեղինակների երկասիրութիւններով, զանազան վէպերով, երկեր և բանաստեղծական շարքերով թիւններով, բայց որովհետեւ 1. ձեւարանում մեր մայրենի լեզուն արհամարհված է ու աշխարհված է, ուստի ընթերցանութեան համար կարեւոր հայոց գրքերի բացակայութիւնը այնտեղ կատարեալ է:

Իբրեւ քաջ տեղեակ 1. ձեւարանի հանգանքներին և իբրեւ նրա վարդապետ աշակերտ, հրապարակութիւն խոստովանում եմ, որ ութը տարեկան ընթերցում, բացի Ս. Նազարեանցի «Հիւսիսափայլից» և մի քանի չնչին գրքերից, որ աշակերտները կողմնակի կերպով էին ձեռք բերում, եւ ուրիշ գրքեր չեմ տեսել ընկերներին մօտ. և եթէ ձեւարանի մէջ պաշտօն վարող հայերից հարցնէիք թէ ինչու հայոց լեզուի դասերը չեն աւելացնում կամ ինչու կովկասից հա-

յերէն գրքեր չեն բերել տալիս աշակերտներին ընթերցանութեան համար, պատասխանը անշուշտ այն կը լինէր թէ՛ հայ մանուկները ուսուցիչներին խօսում, ուրեմն թող ուսուցիչն շատ կարգաւ: Աւելորդ է ասել, որ այդպիսի պատասխանից յիմարագործ երեւակայել անգամ անկարելի է, վասն զի Գուբիւսից, Գորուց, Թելաւից նաև Թիֆլիսից նորեկ աշակերտները իրանց մայրենի լեզուն չը գիտէին և խօսում էին վրացերէն. խրիմյիներէ շատերը խօսում էին ուսերէն, իսկ բեսարաբացիք տաճկերէն և մոլդաւերէն. սրանց համար հայոց լեզուն խորթ էր և խորթ մնաց մինչև ուսման աւարտելը: Դեւարանից: Գեղեցիկ ծառայութիւն հայոց ազգի համար:

Միտ է, որ 1867 թ. երբ դեռ «Փորձը» և «Մշակը» չէին հրատարակվում, իսկ «Մեղու» Հայաստանի լրագրի անունը, վարժապետների չնորհիւ, աշակերտները չէին լսել, Մ-դ դատասանցիք «Հայկական» Աշխարհ էին ստանում ընկերակրթութեան 50-ական կ. գրվելով, այժմ նոյն օրինակով ձեւարանի աշակերտները հայոց լրագրիկներ են ստանում Թիֆլիսից: Այս իրողութիւնը ապացուցանում է, թէ հայ պատանիների սրտերում ազգային եռանդը տակաւին չէ հանգել, նրանք ցանկանում են հետամուտ լինել մեր նոր գրականութեան, բայց ափսոս որ, նրանց պակասում են նիւթական միջոցներ և անձնուէր առաջնորդներ. իսկ 1. ձեւարանը իր անտարբերութեամբ չէ խրախուսում աշակերտների բարի ձգտումները. միթէ ձեւարանն էլ զուրկ է դրամական կարողութիւնից գուցէ կըրկին հարցնի ընթերցողը. դրան թող պատասխանէ 82-դ յօդուածը, որ ներածում եմ ամբողջօրէն: Плата за всѣхъ вообще воспитанниковъ, составляя, наравнѣ со всѣми принадлежащи-

ми Лазаревскому Институту капиталами и имуществомъ, неотъемлемую собственность этого заведенія, употребляется, по представленію Директора и съ разрѣшенія, смотря по размѣру и роду расхода, Министра Народнаго Просвѣщенія или Попечителя Московскаго учебнаго округа, преимущественно на пополненіе штатныхъ средствъ института и на усиленіе учебныхъ пособій, а за тѣмъ уже на вспоможеніе лицамъ, состоящимъ или состоявшимъ на службѣ при заведеніи, и ихъ семействамъ, а равно на непредвидимые расходы. Մեկնութիւնը այստեղ աւելորդ է. ընթերցողը թող ինքն մտածէ իր մտածելիքը. եւ ընդհատում եմ իմ խորհրդածութիւններս:

Նուրբելով այս յօդուածս Լազարեան ձեւարանին, եւ զիտաւորութիւն ունէի՝ ցոյց տալ հայ հասարակութեան, թէ ինչ էր 1. ձեւարանը մի ժամանակ մեղ համար և ինչ է նա այսօր: Երկու խօսք էլ մեր հասարակութեան. եթէ մեր հայերին մէջ չը կան այնպիսի վեհանձն մարդիկ, որոնք իրանց ազգասիրութեամբ և գործունէութեամբ կարողանային նմանել պերճ Լազարեանց տոհմին, մեր պարտականութիւնն է գէթ սրբութեամբ պահել այն, ինչ որ կտակել են մեզ անմահ Լազարեանք և այնուհետև ինչ հարկաւոր է quasi ազգասէրների մի փոքրիկ խումբին պ. Սենեքերիմ Արծրունու առաջնորդութեամբ (синица море хотѣла жечь). Մտովի-յի ուղար (հասկացիր 1. ձեւարանը) թողած, փարկի ճանձն, այն է Մուրադեան վարժարանի ետեից վազել:

Ս. Պետերբուրգ 1.

